# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

### Վէրգէլ 'ի Պինդոսէ առ Բոսփորականին Քծ ։

Որ Աւսոնեան փողս ընդ նուրբ երկրագործին նուագող զարգիւնս
Հայկական ոլորեալ երգս ըզկէս փառաց իմ կապտեցեր .
Անմահական 'ի Պինդոս սիւք անուշիկ հնչեաց երգոյդ ,
Յաւէրժ մայրեացն աստուածանուէր մըրմընջեցին վարսք 'ի գեղջեղ ։
Ընդ 'ի բազմոյրս փափկութեանց' 'ի դարևանդն' ուր անմահից
Հոյլ շուշանաց 'ի գեղաթոյր թերթից ւ' երփնից պալարին աչք ,
Ուր Աստղն արծաթի պաղպաջափայլ ձեռն ալեօք ,
Կանգնեսցուք կճեայ տաճար քեզ 'ի ծաղկանց պճնեալ բոլոր
Մատունք քընքոյշ Մուսայից բուրեան ըզփունջսըն կապեսցեն ,
Շուրջ ըզնովաւ 'ի պարանցիկս երաժըշտացըն հանդէս
Ի գովեստ հընչեսցեն քեզ նուագաւոր դաշնակութիւնս
Ապոլոն , Պինդարոս , Տիբուլ , Կատուլ նախանձընդդէմք ։
Այս 'ի կայտիւըս պարառաջ , պըսակ 'ի գլուխս իմ դափնեփունջ
Համասպրամըն ծաղկունս ծաւալեցից շուրջանակի ,
Եւ բարձրադէտ 'ի ճակատուն քանդակեցից 'ի տառ ոսկի .
" Դափն Աւսոնի 'ի Պինդոս ընծայեցաւ 'ի Վերգիլէ ,, ։

ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻՔԹԱՇԼԵԱՆ
ՅԱՇԱԿԵՐՏԱՑ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

### Ի Ճպուռն ։

ՃԸՊՈՒՌՆ , որ մօրէ 'ի բարունակ
Կախեալ նստիս առաւօտուց ,
Եւ խուն սաղարթ հովանոցակ
Պարզեալ գործես քեզ 'ի բարձունս ,
Եւ ժիրաժիր ըզտիւն ողջոյն
Յերգ հատանիս հանդէպ արփւոյն ,
Քեզ երանի , ով բընական
Զըրխւղդ հաստեալ քաղաքատիկ ,
Որ 'ի խոնարհ քոյդ կերպարան
Չար նախանձու չմատնիս որսիկ .
Խընդիր փառաց և սէր ունայն
Ոչ մեղիցեն քում հաշտութեան ։

Մարմնով նըկուն ես և փոքրիկ ,
Զօրութեամբ քաջ մեծ ճանաչիս .
Յով և սփռես ըզդայլայլիկ
Ինքնին դու անդ տարածանիս .
Թէ կաս ղուղեալ թէ սլներև'
Ամենայն ունկըն դանչի քև ։
Թռչունք երկնից զարևուն շող
Ի քեզ յանձնեն յամարային ,
Եւ զեփիւռս քաղցրահնչող'
Յօրժամ ճճուես դու 'ի դաշտի'
Քեզ խոնարհի ողջունաբեր
Դըշխոյի սպաս հարեալ 'ի սէր ։
Ի տապ աւուր հասարակի
Ուղևորին տաժանելոյ
Քոյդ օթևան է պանդոկի ,